

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈԳՈՒ ՀԱԿԱՍԱԿԱՆ ՆԵՐԱՇԽԱՐՀԸ

*«Դոստոևսկու աշխարհի հենք հաղորդակցվող
մարդը նոր անձ է դառնում, նրա համար կե-
ցության նոր չափումներ են բացահայտվում»:
(ԲԵՐԴՅԱԵՎ)*

Թարգմանաբար ընթերցողին ենք ներկայացնում ռուսական իրականության փայլուն ներկայացուցիչներից մեկի՝ ակնավոր մրաժող Նիկոլայ Բերդյաևի «Мирозерцание Достоевского» («Դոստոևսկու աշխարհայեցողությունը») գրքից մի հատված՝ «Չարը» խորագրով: Ն. Բերդյաևը գրական հարուստ ժառանգություն է թողել, որը հիմնականում կրոնա-փիլիսոփայական բնույթի է: Գրքում քննարկվում են, այսպես կոչված, «հավիտենական» խնդիրներ, դարեր շարունակ մարդու ներաշխարհը խռովող հարցադրումներ, փորձ է արվում բացահայտելու «Պարմության դրաման»: Բերդյաևի փիլիսոփայությունը կյանքի, ապրումի ծնունդ է: Կարելի է նրա ստեղծագործություններն ուսումնասիրելիս պարկերացում կազմել, թե փնտրություն ինչ ուղի է անցել նա իբրև ռուսական իրականության ծնունդ, նրա վառ ներկայացուցիչ: Նա անդրադարձել է այնպիսի մի մեծության, որին կարելի է հիմնադիրը համարել ռուսական իրականության մեջ փոթորկում ձևով սկզբնավորված «ճշմարտության փնտրություն»: Ֆյոդոր Միխայլովիչ Դոստոևսկին, որն սկսեց բարձրաձայն խոստովանել իր, իբրև մարդկության մի հավաքական կերպարի, հոգեկան ապրումները, իբրև հանճարեղ նկարիչ, մարդկությանն այնպիսի մի կրավ նվիրեց, որն անթերի կարելի է համարել: Նա պատկերավոր պատկերեց մարդու հոգին իր ամբողջ մերկությամբ հանդերձ: Ահա թե ինչպես է իր ստեղծագործական ուղին բնորոշել նա. «Մարդը գաղտնիք է: պեպք է իմանալ այդ գաղտնիքը, և եթե ամբողջ կյանքդ հայրկացնես իմանալու, մի՛ ասա, թե ժամանակ ես կորցրել. ես զբաղվում եմ այդ գաղտնիքով, որովհետև ուզում եմ մարդ լինել»:

Ֆ. Դոստոևսկուն փարբեր փեսանկյուններով են մեկնաբանել իր ժամանակակիցները, որոնք միևնույն ժամանակ հասարակության ընդերքում ձևավորված փարբեր սոցիալ-քաղաքական, կրոնափիլիսոփայական ուղղություններ են ներկայացրել՝ ըստ այնմ փորձ փալով իրենց դավանած աշխարհայացքին և ինչ-որ փեղ սուբյեկտիվ վերաբերմունք դրսևորելով այդ մեծ անհատականության նկատմամբ: Այստեղ մեզ համար այդքան էական չէ այն խնդիրը, թե արդյո՞ք սխալ չեն մեկնաբանել Դոստոևսկուն, քանզի ոմանց սխալ կարծիքներից բնավ չի նսեմանում այդ մեծ հանճարի փառքը. այն հանգամանքը, որ Դոստոևսկու ստեղծագործություններն իրենց վրա են բևեռել ողջ դարաշրջանի միտքը, բավական է մեզ պարկերացնելու, թե ինչ հզոր անհատականության ենք հանդիպել, բավական է զգալ փալու պարմության մեղա-

Ֆիզիկական խորքը, այսպես ասած՝ «Տիեզերական ոգու», «Մարքի» կամ Աստծու ներկայությունն ու շունչը, որով պարամությունն է դեկավարվում, սակայն կերպվում է այնպիսի անհատականությունների հավաքով, ինչպիսին Դոստոևսկին է։ Ֆ. Դոստոևսկու մեկնաբաններից ոմանք բացարձակապես մերժել են վերջինիս գաղափարները՝ նրան դաժան գրող համարելով։ Ֆ. Դոստոևսկին իր ստեղծագործություններում և առհասարակ մարդկային կյանքում չափազանց արժևորում է փառապանքը, հանգամանք, որը պարճառ է դարձել վերջինիս մասին արտահայտված թյուր կարծիքների։ Բնականաբար, երբ մենք ընթերցում ենք նրա «Ոճիր և պարիի»-ը, ակամայից զգում ենք, թե ինչպիսի դաժան գծերով է պարկերված իրականությունը, մարդկային կյանքը, մարդը։ Չպետք է մոռանանք, սակայն, որ այդ դաժանությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրականությունը. «Նշտը է հորինել այնպես, որ գեղեցիկ ու հեփաքքրական ստացվի, բավական է նստել ու սրել, չէ՛, հապա ճշմարտությունը գրեցեք»,- գրում է նա։ Եթե մենք անտեսում ենք իրականությունը, ապա, իրոք, դաժան հեղինակ է Դոստոևսկին, իսկ եթե մեր նպատակը իրականության մեջ մնալն ու ճշմարտությունը ճանաչելն է, թե ով ենք մենք՝ աստված, թե՛ գազան, ապա Դոստոևսկին այն հեղինակն է, որին մարդկությունը սպասում էր։ Ահա թե ինչպես է ինքն իր մասին արտահայտվել Ֆ. Դոստոևսկին. «Ինձ հոգեբան են անվանում,- ասել է նա։- Ճիշտ չէ, ես ընդամենը իրապաշտ եմ բառիս գերագույն իմաստով, այսինքն՝ պարկերում եմ մարդկային հոգու բոլոր խորությունները»։

Ըստ Դոստոևսկու, եթե չկա պայքար, չկա և ապրում, որը կարող է առաքինությունների և սխրագործությունների առիթ փայլ մարդուն իր կյանքում արժևորելով սեփական անձը, զգալով Աստծու պարկերի և նմանության առկայությունը, նախասաղմերն իր անհատականության մեջ և ըմբռնելով իր կոչումը իբրև մարդ ապրելու գիտակցությունը, կյանքը, սերը, լույսն ու խավարը, գույների երաժշտությունը, հոգու ելևէջները, բարության հաճույքը, մարդու գեղեցկությունն ու Զրիստոսի խաչելությունը, այլ խոսքով ասած՝ կյանքի խորհուրդը, մարդ-Աստված հակասությունը։ Ֆ. Դոստոևսկին իր ստեղծագործություններում չափազանց արժևորում է փառապանքը, քանզի այն պայքարի արդյունք է, պայքար՝ հանուն մարդու արժանապատվության, հանուն նրա աստվածանմանության։ Այդ պայքարը ծնվում է այն ներքին բախումից, երբ մեղքի արդյունքում աղավաղված Աստծու պարկերը գլուխ է բարձրացնում մարդու մեջ՝ իրեն նսեմացած զգալով, ուրնահարվելով աշխարհի կողմից։ Եթե կա Աստծու պարկերը զգալու ձգտում, նշանակում է՝ կա և պայքար, որը փառապանք է ծնում։ Իզուր չէ ռուս հանճարեղ գրող Լև Տոլստոյը Դոստոևսկու մասին գրում. «Նա ամբողջովին պայքար է»։ Դոստոևսկին շեշտում է փառապանքը՝ նկարի ունենալով պայքարը։ Եվ այստեղ է նրա բարոյական պաթոսն իր ողջ գործությամբ արտահայտվում, քանզի փառապանքն ինքնին բացասական է։ Այս առումով կարելի է կապ փնտել Գր. Նարեկացու և Ֆ. Դոստոևսկու միջև։ Նրանք երկուսն էլ մեծ պայքարողներ էին։ Մեկի մոտ, սակայն, այդ երևույթը «փառապանք» հասկացությամբ է արտահայտվում, մյուսի մոտ՝ «ողբերգություն»։ Այս երկու բառերը համակ գործությամբ են ներթափանցված, նրանք ոչ թե փորձում են մարդուն ոչնչացնել՝ նրա թուլություն-

ները ցույց տալով ու մերկացնելով, այլ հակառակը՝ ուժ են տալիս այդ արարներից ձերբագաղվելու, նրանք մարմանշում են, որ մարդն Աստծու պատկերն է, որ պարզաճ չէ Աստծուն իր մեջ կրող անհատականության ինքնառնչմամբ զբաղվել: Այս առումով առանձնահատուկ մտքեցում ունի Դոստոևսկին. նրա հերոսները հակասական են, երկու ծայրահեղ բևեռներ, և առհասարակ նրա մոտ ցանկացած կոնֆլիկտային դրամա ոչ թե մեկնաբանվում է չարի հատուցման և բարու վարձատրման տեսանկյունով, այլ ինքնաճանաչողության. նա կոչ է անում ճանաչել սեփական իրավունքները և ըստ այդմ պայքարել հանուն սեփական արժանավորության:

Ըստ Ֆ. Դոստոևսկու՝ ուր կա կյանքի մեքենայական ընկալում, այնպեղ չկա պայքար, այնպեղ անգործ է մարդն իրեն տրված արարչագործելու շնորհն արտահայտելու: Ուր կյանքը օրինաչափություն դարձած հիմունքներով է ընթանում, այնպեղ չկա շեղում ու պտթելում, այնպեղ բուրբ տաղվածություն է իշխում, այնպեղ չկա տաղանդ ու հանճար, հասկացություններ, որոնք պայքարի արդյունք են, պայքար, որը նույնիսկ պարտության դեպքում հաղթանակ է ենթադրում, պայքար, որը չի հուսահատեցնում և ոչնչացնում մարդկային անհատականությունը, այլ աստիճանաբար բարոյական ինքնավարության ուղու վրա է կանգնեցնում նրան՝ վերականգնելով Աստվածային պատկերն ու մտանությունը՝ անկումով աղավաղված մարդկային բնության մեջ:

ԳԵՎՈՐԳ ԱՔՂ. ՍԱՐՈՅԱՆ